Շուշիի բնակչության սոցիալ-տնտեսական իրավիճակի ուսումնասիրություն

«Շուշի վերածնունդ» հիմնադրամի նախաձեռնությամբ 2006թ. ստեղծվել է աշխատանքային խումբ, որը կատարել է փորձագիտական հետազոտություն Շուշի քաղաքի բնակչության և նրանց բնակարանային պայմանների վերաբերյալ:

Հետազոտության նպատակն էր ճշտել՝

- բնակչության թվաքանակն ըստ սեռատարիքային կազմի,
- կրթական մակարդակը,
- մասնագիտությունների տիրապետումը,
- սոցիալ-տնտեսական վիճակը,
- բնակարանային պայմանները:

Ծրագրի արդյունքում ստեղծվել է Շուշիի բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի և ժողովրդագրության ծավալուն բազա: